ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2022 թվականի № ----Ա
ք. Երևան

«ԴԱՍ ԷՆՏԵՐԻԱ ԶՈԼԱՐՔՐԱՖԹՎԵՐՔ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էներգետիկայի մասին» օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվությունները, այլ տեղեկատվությունը և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով,

բ) Հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 26-ի «Էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց ֆինանսական հաշվետվության ձևերը և դրանց ներկայացման կարգը հաստատելու և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N103Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն՝ էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց կողմից ֆինանսական հաշվետվությունների (այսուհետ՝ Հաշվետվություններ) ներկայացման ժամկետը մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ն է, սակայն «ԴԱՍ ԷՆՏԵՐԻԱ ԶՈԼԱՐՔՐԱՖԹՎԵՐՔ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի արդյունքներով Հաշվետվությունները Հանձնաժողով է ներկայացրել 2022 թվականի ապրիլի 28-ին,

գ) Որոշմամբ սահմանված պահանջի չկատարման փաստի ուսումնասիրման նպատակով 2022 թվականի մայիսի 25-ից Հանձնաժողովն Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է 2022 թվականի մայիսի 24-ի № ԳԲ/34.4-Ղ4-2/1643-2022 գրությամբ,

դ) Ընկերությունը 2022 թվականի հունիսի 1-ի գրությամբ ընդունել է խախտման փաստը,

ե) Իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված ժամկետը, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2022թ.